

բ) Աստուածաշնչի Աբ-բ-բ-բ և Ասորիների Աբ-բ-բ-բ կնշանակէ Սեմական մատենագիրների մէջ հարաւային Հայաստան, Քիւրդստանի սարերը հետը որոնք Հայաստանը Միջագետքից կբաժանեն:

գ) Աբ-բ-բ-բ, որի վերայ, Ասորիների աւանդութիւններով, կանգնեց տապանը, Մեծ Արարատ շէ, այլ հարաւ—հայկական սարերի գագաթներից մինն է:

Քննենք Խորենացու պատմութիւնից և ծննդաբանական աղիւսակից յառաջ բերած մեր քաղաւածները: Առաջին չորս անունների մասին ոչինչ չենք կարող աւելացնել, բացի նորանից ինչ որ արդէն ասված է: Գառնանք հինգերորդին:

5. Հ-յէ *) և 10 Կադմոս: Մենք արդէն ասացինք, որ հայկական ազգի ցեղապետների աղիւսակում արհեստարար միացած են երկու ծննդաբանութիւն, որոնցից առաջինը սկզբում կպատկանէր Հայերի ցեղին և կազմված էր հեռեհալ անձներից:

Հայկ. Կադմոս—Խոս—Մանաւաղ. Բաղ:

Իսկ երկրորդը կներկայացնէ Հայերի ցեղի վիպանուն (էպոնիմ) դարձած զինացաբանական Արմենակի սերունդը: Այժմ դառնանք քննելու առաջին ծննդաբանութիւնը:

(Աղաբո-նակիլի).

Ս. Տ. Գ.

ՓՈԹՈՐԻԿ ԵՆՄԱՅԻՔԸ ԿԴՋՈՒՄ:

Օգոստոս ամսի մի գեղեցիկ առաւօտ ես դուրս եկայ տնից այն նպատակով, որ այցելեմ ինձ ծանօթ Գօրգօն ընտանիքին, որ բնակուեմք մի քանի մղոն տարածութեամբ զրախտի մէջ, Թէեւ իմ նեղրուհին Ճշդութեամբ ասուեմք ինձ, որ փոթորիկ պէտքէ լինի, բայց եղանակացոյցը ոչինչ երեւումն չէր ցոյց տալիս և խոստանուեմք գեղեցիկ օր: Գրախտ կոչվումք իմ ծանօթների բնակարանը նորա համար, որ այդտեղ թագաւորումք շքեղ բուսականութիւն և գտնվումք երկու լեռնաշղթաներով պատած մի հիանալի հովտի մէջ:

Իմ սեաւ ծառայիս ուղեկցութեամբ, ես ուրախ և զոհ գնումքի այդ հրաշալի առաւօտը արեալարձային բնութեան գրաւիչ տեսարանների մէջով: Մենք ազատ շնչումքինք բոյսերի զովացուցիչ գոլորշին. մեր աչքերը յափշտակվումքին աննկարագրելի գեղեցիկ դաշտերի անընդհատ փոփոխվելովը: Բայց յանկարծ ես ակամայ յիշեցի ծեր նեղրուհու գուշակութիւնը, որին տեղիք տուեց հպարտ և մեծատեսիլ երեւոյթը: Սեաւ ամպերի վիթխարի պատերը բարձրացան ծովից և կախվեցան հեռու հօրիզոնի

(*) Հայկական թագաւորների անունների առաջ դրված Թ ուները նոցա տեղը կնշանակեն Հայերի ցեղապետների ծննդաբանական աղիւսակում, Տես նախընթացը:

վերայ: Նոյնժամայն, երբ ես ուշի ուշով նայումէի այս երևոյթին, յանկարծ այս խիտ խմբերից մութ ամպ բաժանվեցաւ, յառաջ խաղաց և շուտով ծածկեց Տօրիզօնի կէսը: Երկնքի միւս մասը երկար ժամանակ պահպանեց իւր պայծառութիւնը և կապտութիւնը, ներկայացնելով սաստիկ ընդդիմապատկեր սեաւ ամպերի պարսպին:

Այս ընդդիմապատկերը վերջապէս հասաւ վերջին սահմաններին և շուտով սեաւ ամպերի խմբերից սկսաւ փայլատակել կայծակը, խփելով մինչև ծովը, սկզբում՝ որոտման տրոփիւնները խուլ էին լսվում, բայց քանի գնաց զօցացաւ: Նոցա արձագանքները սաստիկ հնչումէին լեռների և ժայռերի մէջ: Սակաւ ինչ յետոյ, երկնքի կապոյտ մասն ևս կատաղութեամբ յարձակվող ամպերը ծածկեցին: Զիւրը և իմ ծառան սկսեցին անսովոր կերպով իւրեանց ընթացքը արագացնել, նոքա առաջ էին գնում՝ այնպիսի երկիւղով, որ կարծես թէ մրցել էին կամենում իւրեանց արագ ընթացութեամբ փոթորկի հետ:

Մեր շուրջ թագաւորումէր սարսափեցուցիչ լուծիւն. ոչ քամու ձայն էր լսվում, ոչ ծառերի տերևների շարժում, և ամպերը անդրադառնումէին բոլորովին խաղաղ ծովի մէջ: Մենք հեռուից տեսաւք Գրախտը, նա լիակատար իրաւունք ունէր կրելու այս անունը, որովհետեւ իմ ամբողջ կեանքի մէջ ես չէի տեսած այսպիսի մի կենդանագրական դիրք և զմայլեցուցիչ հովիտ:

Մեր արագընթաց ձիերով մենք շուտով հասանք մեր տեղը: Գօրգօնը և նորա երկու աղջիկները ընդունեցին ինձ ամենանկեղծ հիւրընկալութեամբ և իսկոյն հրաւիրեցին նախաճաշելու: Մինչդեռ մենք զբաղած էինք կերակրով, փոթորիկը հարուածումէր սաստիկ անձրևով, որը աստիճանաբար զօրանումէր: Միտէր Գօրգօն զգուշութեամբ շտապեց փակելու դռները և պատուհանները, և մի քանի ծառաների օգնութեամբ տարաւ ամենակարեւոր կենսական պաշարները մառանը, որ հաղորդակցութիւն ունէր իւրեանց բնակած սենեակների հետ և դիտմամբ տան տակն էր շինված, այսպիսի փոթորիկներ. դէպքի համար: Նոյն ժամանակ երբ մենք զբաղած էինք մշակները եկան դաշտից և նոցա հետ շատ զրացինք, այն նպատակով, որ ապաստարան գտնեն մեծադիր մառանում: Երկինքը բոլորովին սևացած էր և ամպերը համարեա իջնումէին մինչև կատաղի ծովի ալիքներ: Պայծակը անընդհատ կտրումէր ծովը և ինչպէս երևումէր, նորից դէպի վեր էր ցատքում: Որոտումը թնդումէր անդադար, բոպէ առ բոպէ զօրանալով, և շարժումէր տունը հիմքից: Անձրևը թափվումէր երկնքից հեղեղներով կարծես բոլոր երկնային սահանքներից, մթութիւնը մինչև այն աստիճան թանձրացաւ, որ հազիւ կարելի էր կայծակի կարծ միջոցին տեսնել աչքերիս մօտ տարած ձեռք: Փոթորկի շաշիւնը, որոտման տրոփիւնը, կուրացուցիչ կայծակի փայլակը և յորդահոս անձրևի աղաղակը մի տեսակ սարսափ էին յառաջ բերում:

Տանեւմէկ ժամին թնդիւնը, զարհուրելի որոտը և ճայթիւնը այն աս-

տիճանին հասաւ, որ երբեք չեն նկատված փոթորիկներով հարուստ արևադարձային լայնութեան մէջ և որն անգամ դժուար է ներկայացնել, բայց և այնպէս անրևակայելի թնդիւնը և աղաղակը բոպէ առ բոպէ դորանումէին, այնպէս որ մենք չէինք կարողանում միմեանց լսել միմեանց ականջում խօսելով ևս: Տունը երերումէր իւր բոլոր մասերով և ամեն մի բոպէում սպառնումէր խորտակվել: Մի քանի անգամ յատակը ճօճվեցաւ այնպէս, ինչպէս նաւի վերին տախտակամածը կատաղի ծովի մէջ: Տանիքի կղմինտները և քարերը անձրևի պէս թռչումէին: Այժմ ամենայարմար ժամանակ էր փրկութիւն գտնելու գետնափոր կամարների տակ: Միստէր Գորգօն առաջուց նշաններով և բռունցներով ցած քշեց երկիւղից թմրած նեղրներին, ապա ես և նորա ընտանիքը իջանք:

Սանդուղի վերայ լսեցի մի սաստիկ որոտման հարուած ձայնով և թնդիւնով, և ակամայ բարձրացայ, տեսնելու թէ ինչ է կատարվում այնտեղ: Փայլակի միջոցին, ես աեսայ զարհուրելի տեսարան. օդի մէջ տարուբերվումէին ծառերի ճիւղեր և բուններ, գերաններ և ուրիշ կարծր առարկաներ, սաստիկ ոյժով խփվումէին տանը և նորից հեռանումէին: Յանկարծ լսեցի սարսափեցուցիչ շանթ և կարծեցի, թէ ամբողջ տունը քանդվեցաւ: Խաւարը կտրօղ կայծակներից, որոտի բուխիւնից և քամիների գոռոցից ես ճանաչողութենիցս ընկայ: Աւերջին բանը որ ես յիշումեմ, այն էր որ միստէր Գորգօնը ջանք էր անում ինձ ցած ձգելու և բաց դուռը փակելու: Սակաւ ինչ յետոյ զգացմունքի եկայ և կարողանումէի լսել մերձաւոր ձայները և զանազանել գէմքերը լապտերի աղօտ լոյսով:

Ամարի տակ իւրեանց անվտանգ համարելով մարդիկը սակաւ առ սակաւ մահի երկիւղից սկսան ազատվել, ես ևս աւելի հանգիստ էի շնչում: Բայց այս երկար շտեկեց, Յանկարծ մեր գլխի վերայ թնդանօթի դնողի ձայնիւնի նման ձայն լսվեցաւ, առաստաղը տատանվեցաւ և դողաց: Մինչև անգամ երկիրը մեր ոտների տակ, կարծես վտանգ էր սպառնում:

— Տունը փլաւ, ասաց միստէր Գորգօնը: — Ես գիտեի, որ նա չէր զիմանայ:

Նեղրուհիները հառաչում և գոչումէին, իսկ մի երիտասարդ կին, բարձրը թռչելով, սկսաւ անդիլերէն վատ արտասանութեամբ արտասուել մանուկի մասին, որը վերելում քնած մնացած էր: Նա սանդուղիների վերայով կամենումէր բարձրանալ, բայց ծեր նեղրուհին նորան թող չտուաւ:

Այս կերպով մենք մի ժամ անցուցինք, չիմանալով ինչ է պատահում վերելում, սակայն կարելի էր նկատել, որ փոթորիկը հանդարտումէր:

Աւերջապէս ես չկարողացայ երկար տանել այսպիսի դրութիւն, բարձրացայ սանդուղով և փորձեցի բարձրացնել զէպի վեր բացվող դուռը, բայց այնքան ոյժ չունէի, որ կարողանայի գոնէ տեղից շարժել: Մեր փորձերը անյաջող եղան, և մեզ երկիւղը տիրեց, չլինի թէ քանդված տան ծանր մասերը ընկած են զրան վերայ և բոլորովին բաժանումեն մեզ արտաքին

աշխարհից, Մեր զրուծիւնը մեր կարծածից աւելի զարհուրելի եղաւ. զրսից օգնութիւն չէր երևում, իսկ մեր պաշարը շատ սակաւ էր:

Բայց աւելի վատն յետոյ էր: Ահով լցված լուծիւն տիրեց մի քանի վայրկեան, ապա լավեցաւ մի թոյլ և խուլ ձայն մեր կանգնած գետնի տակից: Անցաւ մի քանի վայրկեան ևս: Աղաղակը զօրացաւ, մօտեցաւ մեզ, թնդաց մեր տակը: Հոգը բարձրանումէր և ցածանումէր, ամբողջ շինութիւնը որորվումէր, պատերը ճայթումէին, սանդուղի կտորները ընկան նեղրների վերայ, որոնք գոռում և ողբումէին: Մի անասելի երկիւղի վայրկեան էր: Մենք ահ ու դողով պատած սպասումէի՝ք, որ երկիրը կրացվի և մեզ կկլանէ:

Նրկրաշարժը մեր ոտի տակից անցնելով, որոտմամբ առաջ էր գնում, երկիրը զրոգեցնելով: Մեր ոտի տակի շարժումը դադարեց, բայց սորանից նոր վտանգներ յառաջացան: Պատի ճեղքից հեղեղն արագութեամբ ներս մտնելով, արդէն յատակը մի քանի մատնաչափ ծածկեց: Սկզբում այս նոր վտանգը մեզ շատ չվախեցրեց, բայց ջուրը աննկատելի արագութեամբ աւելանումէր և մեր դէմքերի վերայ ահի և անսահման յուսահատութեան նշաններ էին երևում: Ամեն կողմից գոռում գոչումի ձայներ էին լսվում: Բայց միտէր Գօրգօնը և նորա աղջիկները բոլորովին հանդիստ էին: Քաջութիւնը և ինքնազսպումն միշտ նոցա հետ էին: շնայելով որ ջուրը մինչև ծնկներ բարձրացել էր, Երկու երիտասարդ աղջիկների երեսին երևումէին համեստ հնազանդութիւն և բարձր անսասանելի արիութիւն, որ առհասարակ սովորական է արևադարձային անգլիական երկիրների կանանց:

Սակայն ջուրը հետզհետէ աւելանումէր և վերջապէս բարձրացաւ հասաւ մինչև բաճկոնս: Ես այլ ևս փրկվելու յոյս չունէի, և շուտով տեսայ, որ մեզ ոչինչ է մնում անելու, եթէ ոչ հանգստութեամբ մահի սպասել, որը հանդարտօրէն մեզ մօտենումէր: Թէպէտ իմ կեանքումն շատ վտանգների և զարհուրելի զրուծիւնների էի պատահել, բայց և այնպէս սորա նմանը չէի տեսած: Մարդս քաջ կարող է լինել, երբ որ բոլորովաժ է կրքով կամ երբ պատերազմի եռանդը յափշտակումէ նորան, բայց չորս պատերի մէջ մնալ և տեսնել թէ ի նշպէս մօտենումէ հետզհետէ զարհուրելի աւերիչը—սորա համար առանձին քաջութիւն է հարկաւոր:

Ջուրը հասաւ մեր ուսերին, մինչդեռ նորա երևիլը կէս ժամ չկար: Նոյն վայրկեանին նորից երկիրը գիտնի տակ զարկից շարժվեցաւ և մենք զգումէինք նորա երերումը: Մառանը դողդողաց, ջուրը փրփրաց և սկսաւ պակասել: Սկզբում ինձ թուումէր թէ աչքերս ինձ խաբումեն, և ճշմարիտ որ ջուրը ծանր էր դուրս գնում և ձանձաղանում: Ամենքն այս նկատեցին և սկսան անշատ շնչել, տեսնելով որ փրկութեան յոյսը հասնումէ: Մահի երկիւղը անհետացաւ, բայց արդեօք ո՞վ կարող էր մեզ ազատել այս կենդանի գերեզմանից: Ի՞նչ կերպով վերելից կարող էր մեզ օգնութիւն հասնել: Այս զրութեամբ մենք անցուցինք մի քանի ժամ ևս, մինչև որ պատրոյզը այրվեցաւ և լապտերն հանգաւ: Մենք բոլորովին խաւարի մէջ

մնացինք, և կամաց կամաց սկսեցինք նիրհման մեջ մտնել, Մի ժամանակ ինձ թուումէր թէ ես քնել եմ, առ հասարակ ամենքը նուազած և անըզ-
գայացած էին, և ոչ ոք չէր կարողանում և ոչ մի բառ արտասանել, Այս սարսափեցուցիչ լռութեան մեջ, իմ աչքերի առաջ ներկայանումէին
վայրենի պատկերներ և երեակայութիւնս աղմկող երեղծներ, և ահա
յանկարձ լավեցաւ մի զարհուրելի ձայն, « Զուր, ջուր, նորից դալիս է,
Մի՛թէ չէք լսում, » Ես շատ թողլ էի լսում ձայնը և չէի կարողանում
զանազանել, արդեօք ջրի ձայն էր այն թէ ոչ, նորից տիրեց լռութիւն,
Ես շօշափումէի շուրջս, բայց իմ զգայականութիւնս այն աստիճան ըմա-
ցած էր, որ ես չկարողացայ համոզվել, ջուրը բարձրանումէր թէ ցածա-
նում, և կայ արգեօք ջուր մատանում թէ չէ, նորից աղաղակ լավե-
ցաւ, Այժմ ես աւելի պարզ լսեցի և չէի կասկածում, որ մեզ օգնու-
թեան են հասած, Շուտով լավեցաւ բահերի, թիակների զարկը, վերջա-
պէս լսեցինք մարդիկների ձայներ ևս, Օգնութիւնը մօտ էր, Այսպիսի
փրկութեան յոյսը զարհուրելի ժամերից յետոյ ամենքի կուրծքից դուրս
հանեց վայրենի ուրախութեան ձայներ:

Քանի մի վայրկեանից յետոյ, արեգակի ճառագայթները մեր ապաս-
տանարանի ներս թափանցեցին ճեղքված պատից, Մեր զգացումը և նե-
զըրների ուրախութիւնը անկարող եմ նկարագրել, Մենք փրկված էինք,
բայց սանդուղի պակասութիւնը ուշացնումէր մեր գետնափոր ապաստարա-
նից դուրս գալը, Երիտասարդ նեզրուհու մանուկը, որի մասին նա ողբու-
մէր, աւերակների տակ բոլորովին անվնաս գտնվեցաւ, Մեզ ազատողները
միստէր Գօրդօնի սեաւ մշակներն էին, որոնք փոթորկից առաջ դաշտում
աշխատումէին, համարեա տնից միեկէս մղոն հեռաւորութեամբ, Թէպէտ
նոքա ևս ենթարկվել էին կատաղի փոթորկին, բարեբաղդութեամբ ազատ-
վել էին և շտապել էին օգնելու իւրեանց տիրոջը և դաստիարակին, Աւե-
րակների տեսարանը, որոնք մեր աչքի առաջ ներկայացան, երբ մենք մեր
ապաստարանից դուրս եկանք, անկարելի է խօսքերով արտայայտել, Դը-
րախտային գետինը, որը փոքր ինչ առաջ կանաչ էր, ծաղկած էր և զմայ-
լեցուցիչ տեսարան էր, այժմ կարծես ահագին հրդեհով այրված լինէր,
Բոլոր շուրջը մերկ և սևացած էր, Բուսականութիւնը, մարդկային բնա-
կարանները, կենդանական կեանքը — բոլորը կամ ոչնչացած էր, կամ
տների և ծառերի աւերակների տակ էր թաղված:

(Թարգմ.)

Ճէ. Դ. Դաս. աշ. Յ. Տ. Գ.

ԱՆԳԼԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ,

Անգլիական բոլոր թէ հարուստ և թէ աղքատ ուսումնարանները հիմ-
նըվեցան մասնաւոր անձների և ընկերութիւնների ձեռով, և այս պատճա-
ռով նոցա կեանքի և գործունէութեան մեջ կառավարութիւնը ամենեւին